№ 215 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18 **1899** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18 № 215

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարներ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 252.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վիճակագրութեան ընդհանուր սիստեմ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի առաջարկութիւն. Հայոց ներկայացումները Բագուում. Նամակ Ղազախի գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Պարիզից.

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԻՍՏԵՄ

—

Առևտրական այն միջազգային ժողովում, որ տեղի ունեցաւ Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքում, մանրամասն քննվեց և արծարծվեց ժամանակակից կեանքի մի կարևոր խնդիր, այն է արդիւնագործական և առևտրական վիճակագրութեան խնդիրը: Ժողովի անդամները բազմաթիւ օրինակներով ցոյց տուին, թէ օ՛րքան անյարմարութիւններ ունի վիճակագրութեան ներկայ դրութիւնը, երբ իւրաքանչիւր պետութիւն մշակում է տեղեկութիւններ ժողովելու իր ձևերը, առանց համաձայնեցնելու նրանց միւս պետութիւնների ընդունած ձևերի հետ: Այդ պատճառով շատ դժուար է համեմատել զանազան պետութիւնները միմեանց հետ, և անհրաժեշտութիւն է զգացվում կատարել բազմաթիւ լրացուցիչ հաշիւներ, որոնք շատ անգամ դարձեալ չեն հասցնում բաւարար հետևանքի:

Այն օրից, որ Անդրկովկասը սկսեց շփվել միջազգային վաճառականոցի հետ և մեր երկրի այնպիսի արդիւնքները, ինչպէս են նաւթը, բամբակը, շերամը, բուրդը և այլն սկսեցին վաճառվել օտար պետութիւնների սահմաններում՝ անհրաժեշտութիւն զգացվեց հետևել օտար պետութիւնների առևտրական և արդիւնագործական զարգացմանը և աշխատել հասկանալ այնտեղ տիրող տնտեսական հանգամանքները և պայմանները: Վիճակագրութիւնը կազմում է իրերի վիճակի հետազօտութեան և նկարագրութեան մի այնպիսի ձև, որ պահանջում է մեծ ճշտութիւն և որոշ սիստեմ: Վիճակագրութեան լեզուն միշտ հակիրճ է և ամփոփ: Այդ պատճառով նա շատ յարմար է համեմատութիւններ անելու և եզրակացութիւններ դուրս բերելու համար:

Սակայն այն դիւրութիւնը, որ մի երկրի վիճակագրութիւն տալիս է այդ երկրի արդիւնագործութեան և առևտրի նկարագիրը ներկայացնելու համար՝ բոլորովին կորչում է, երբ պէտք է ներկայացնել մի քանի երկիրների կամ համաշխարհային արդիւնագործութեան և առևտրի վիճակը: Այժմ, երբ օրից օր աւելի ու աւելի է զարգանում ազգերի մէջ շփումը և միջազգային արդիւնագործական և առևտրական հաղորդակցութիւնը՝ ցանկալի է, որ ամերիկական կոնգրէսի բաղձանքը իսկապէս իրագործվէր մօտիկ ապագայում և մշակվէր արդիւնագործական և առևտրական վիճակագրութեան համար միատեսակ սիստեմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ
(Նամակ Բագուից)

—

Ամեն տարի Կովկասի չորս կողմից Բագու են գալիս մեծ բազմութեամբ պարապ մարդիկ, որոնցից քչերին է աջողվում անմիջապէս տեղ գտնել: Քիչ թէ շատ կանոնաւոր պաշտօններ ձեռք բերելը, վերջին ժամանակներս մանաւանդ, կապված է անթիւ դժուարութիւնների հետ: Այդ դժուարութիւններից մէկի վրա, որը ամենից աւելի արժանի է ուշադրութեան, մենք մատնացոյց կանենք:

Ռուսաստանի մի քանի գլխաւոր քաղաքներում, Պետերբուրգում, Մոսկվայում, Բոստովում և ուրիշ առևտրական կենտրոններում, կան գործակատարների ընկերութիւններ, կամ ինչպէս անուանում են՝ արտելներ: Այդ արտելները ունեն որոշ, հաստատված կանոնադրութիւն և իւրաքանչիւր բաժնետէր ընկեր, մասնակից լինելով ընկերութեան շահերին՝ վայելում է միևնոյն ժամանակ նրա պաշտպանութիւնը, և վերջինի լիակատար պատասխանատուութեամբ առաջարկվում է պէտք եղած տեղերը ծառայութեան, հանելով իր ատացածի մի չնչին տոկոս յօգուտ ընկերութեան:

Այդ ընկերութիւններին պատկանող շատ ծառայողներ այժմ զործում են Կովկասում և դրանցից «Ростовская на Дону Биржевая артель» ունի նոյն-իսկ յատուկ գործակալութիւն Բագուում, որ մատակարարում է տեղական առևտրական տներին և շոգենաւային ու ուրիշ ընկերութիւններին պէտք եղած թւով ծառայողներ, ամեն տեսակ պաշտօնների համար: Ուստի զարմանալու ոչինչ չը կայ, եթէ շատ դէպքերում ֆիրմայի կառավարիչը—տեսնում էք—մերժում է իր ճանաչած ընդունակ, հասկացող ծառայողին և գործը, պատասխանատուութիւնից ազատ լինելու համար, աւելի սեռ վարձատրութեամբ տալիս արտելի մի աւելի անպէտք ներկայացուցչին:

Մրցել այդպիսի ծառայողների հետ հասկանալի պատճառով մերոնք չեն կարող, ի հարկէ: Ինչու ուրեմն Բագուն չունենար իր սեփական արտելը, որտեղ ուրախութեամբ կը մասնակցէին հարիւրաւորները մեր ծառայողներից և գործ փնտռողներից: «Արտելը» կանոնաւոր կառավարիչների ձեռքում կարող էր հիանալի արդիւնքներ տալ, որովհետև այն ժամանակ ընկերութեան մասնակցող ամեն մի անդամ միջոց կունենար հեշտ կերպով պաշտօն ձեռք բերելու, և տեղական առևտրական տները, որոնք պահում են «արտելի» մարդիկ՝ ձեռքի տակ եղած ընկերութիւնը, թողած հեռունները չէին դիմի: Ղեկավարվելով որոշ կանոնադրութեամբ, «արտելը» իր դրամագլխի մի մասը կարող էր գործածել այնպիսի ձեռնարկութիւնների վրա, որոնք նրան անպայման շահ կը բերէին:

Կը բերեմ օրինակներ:

Այս րոպէին տեղական շոգենաւային ընկերութիւնների նաւահանգիստներում, մաքսատանը, երկաթուղու կայարանում, Բալախանում, Սև քաղաքում բանում են հազարաւոր մշակներ, որոնց կատարելապէս հարստահարում են զանազան «փոդրադչիներ»: Որևէ նաւահանգստի մշակների գլխաւորը, տեսնում էք, վաստակում է հազարներ առանց որևէ «բիսկի», իսկ բանող մշակը հազիւ կարողանում է ձեռք բերել մի ողորմելի օրապահիկ: Ինչու: Որովհետև շոգենաւային ընկերութիւնը հնար չունի միանգամից օրը մի քանի հարիւր մարդ վարձելու, և գլխացաւից ազատ լինելու համար յանձնում է գործը որևէ մէկին:

Ես գիտեմ շատ այդպիսի «փոդրադչիներ», որոնք մի քանի տարի առաջ «փալանը» ուսերին մշակ են եղել, բայց այդ գործով հաղարներ աշխատելով՝ այսօր անագին կարողութիւն ունեն:

Վեր առնելով այդպիսի գործեր՝ ընկերութիւնը կրկնակի լաւ գործ արած կը լինէր, թէ մշակներին լաւ վարձատրելով և թէ ինքը բարեխիղճ շահ վեր առնելով: Մշակները աւելի ուրախութեամբ կը բանեն նրանց մօտ, քան պարսիկ փոդրադչիների մօտ, որոնք կաչի են քերթում: Իրանք, գործի տէրերը, նոյն-իսկ աւելի ուրախութեամբ գործ կը ցանկանան ունենալ մի կազմակերպված ընկերութեան քան որևէ մասնաւոր «համշարու» հետ:

Մի ուրիշ գործ: Թէև այս մէկը գուցէ սկզբում «արտելի» ոյժից վեր լինի, և նոյն-իսկ ցանկալի՝ առանձին ընկերութեամբ գլուխ բերել:

Բաւական խօսվել է մեզանում, թէ ինչ միջոցներով կարելի է մեր մէջ գրքերի տարածելու գործը ընդարձակել և առաջ տանել: Ցոյց տուած միջոցներից ոչ մէկը իսկ կարծիքով համապատասխան և նպատակայարմար չէ եղել գործին: Սակայն կայ մի միջոց դրա համար, որ, հաւատացած եմ, շատ փայլուն հետևանքներ կարող է ունենալ, եթէ գործի գլուխ կը կանգնեն հասկացող և աշխոյժով մարդիկ:

Ահա իմ ծրագիրը:

Կազմել 50 հազար ռուբլի դրամագլխով մի ընկերութիւն, 250, 100, կամ նոյն-իսկ 50 ռուբլիանոց բաժիններով: Բերել կատարելագործված արագատիպ մեքենաներ իրանց ամեն յարմարութիւններով և կարելոյն չափ գեղեցիկ տառերով: Բագուում մի այդպիսի տպարանը, եթէ գործին շահակից են դառնում հարիւրաւոր մարդիկ՝ կունենայ այնքան օգուտ, որ իր բոլոր ծախքերը ծածկելուց յետոյ նշանաւոր դիվիդենտ կը տայ բաժնետէրերին: Գաւառների բաժնետէրերի հետ յարաբերութեան մէջ մտնել և տպարանից հրատարակված գրքերը, որ նա կը տպագրէ անընդհատ, մասնաւոր գործերից դուրս, ուղարկել նրանց մեծ զիջումներով, նշանակելով գրքերին կարելի եղածին չափ մատչելի գներ, որը որքան անհնար կը լինէր մի մասնաւոր մարդու համար՝ նոյնքան հնարաւոր է մի տպարանի, որի ծախսը միայն թղթի փողը պէտք է լինի:

Կարելի է յարաբերութիւն սկսել մեր բոլոր դրագէտների, թարգմանիչների, խմբագիրների և հրատարակիչների հետ:

Տպարանի մի բաժանմունքում պարապելով միայն գրքերի վրա՝ կարելի է տարվայ ընթացքում մեծ թւով լուրջ հրատարակութիւններ ունենալ, որոնք մատչելի գնով անպայման կը տարածվեն, մանաւանդ որ տպարանի բազմաթիւ բաժնետէրերը կօգնեն նրան:

Եթէ ընթերցողը հետաքրքրվել է հայ գրականութեամբ, նա կը յիշէ անկասկած, թէ ինչ մեծ ծառայութիւն է արել իր ժամանակին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐԻԶԻՑ

I

Վերջին ամսում դուրս եկած գրքերից ամենաշատ աչքի ընկնողը անշուշտ Ֆրանսիացի բօմանիստ Զոլայի վէպն է, որ կրում է «Բեղմնաւորութիւն» («Fécondité») անունը:

Զոլան, որի հռչակը համաշխարհային դարձաւ շնորհիւ իր զուտ քաղաքացիական միջամտութիւններին, Դրէյֆուսի գործի առիթով՝ ներկայումս այնպիսի տեղ է գրաւել ֆրանսիական հասարակական կեանքում, որ նրա ամեն մի գործը, ամեն մի գրական երկը՝ անվերջ վէճեր, կռիւներ, հայհոյանքներ, իսկ միւս կողմից գովասանքներ ու հիացմունքներ է շարժում:

Ցայտնի բան է, որ նրա «Բեղմնաւորութիւն» վէպը իրան հակառակ կուսակցութեան պատկանող քննադատներին պէտք է կատաղեցնէր, որոնք հավաքեա ամեն շաբաթ նոր-նոր պամֆլէտներ են շպրտում այդ քաջ քաղաքացի-գրողի գլխին: Իր պամֆլէտ-քննադատներից Զոլան այն աստիճան զզուել էր, որ իր գրքերի մասին հայհոյական քննադատութիւնները կարդալիս ասում էր. «այս առաւօտ էլ ստիպված էի կլանել մի կենդանի գոմաղ»:

Ու կար ժամանակ, երբ Զոլան դեռ բարեհաճում էր պատասխանել կամ բացատրել իր քննադատների հարցերը, կամ տկար մտքի զառանցանքները: Սակայն այժմ նա աւելորդ է համարում մինչև իսկ նրանց գրածը կարդալ, չէ թէ պատասխանել:

Ինչպէս յայտնի է ընթերցողներին՝ Զոլան 20—25 տարվայ ընթացքում հրատարակեց մի շարք վէպեր, որոնք դուրս եկան զանազան անուան տակ և որոնք «Ռուգոն-Մակարների տոհմի սոցիալական և ֆիզիոլոգիական պատմութիւն» են: Իր այդ վէպերով Զոլան ընդ միշտ հաստատեց գրականութեան «նատուրալիստական» դպրոցը Արևմտեան Եւրոպայում: Դրանից յետոյ, վերջին 4—5 տարվայ ընթացքում, նա հրատարակեց «Երեք քաղաք» ընդհանուր անուան տակ երեք հատ վէպ—«Լուրդ», «Հռոմ» և «Պարիզ»: Իսկ այժմ իր «Բեղմնաւորութիւն» վէպով նա ձեռնարկում է, ինչպէս ինքն էր գրել՝ «լոյս ընծայել չորս աւետարան»: «Բեղմնաւորութիւնը» Աւետարանի առաջին մասն է. միւս երեքը երևի դուրս կը գան մէկը միւսի յետևից հետևեալ 3—4 տարվայ ընթացքում: Եթէ մինչև այժմ, մանաւանդ իր վերջին վէպերում, Զոլան գլխաւորապէս թէօրետիկական (և գլխաւորապէս քաղաքական ու սոցիալական ոգի կրող) հարցեր էր յարուցանում՝ «Բեղմնաւորութիւն» վէպի մէջ նա ուղղակի գործնական հարցեր է դնում և պաշտպանում կամ բացատրում ըստ իր հասկացողութիւնների:

Այսպէս «Բեղմնաւորութեան» մէջ հռչակաւոր բօմանիստը վէպի ձևով ցոյց է տալիս, թէ ինչպէս մայր երկրի բեղմնաւորութիւնը և նոյն-իսկ մարդկային բնութիւնը պահանջում է ընտանիքի, կնոջ և տղամարդու բեղմնաւորումը, արդասաւորութիւնը, թէ ինչպէս արհեստական միջոցներով որդեծնութեան դէմ կենալը, թէ ինչպէս բնական բեղմնաւորութեան դէմ մաքառելը և դիմադրելը—տանում է դէպի մի շարք բարոյական և ֆիզիկական ցաւ ու տանջանք, առաջացնելով մինչև-իսկ ընտանիքի մնտեսական տապալումը:

Բայց, ի հարկէ, այսպիսի թեմաներ յարուցանելուց յետոյ՝ պէտք է որ հեղինակը ամենայն լրջութեամբ և առանց միակողմանի խորհրդածութիւնների մէջ ընկնելու, քննէ և անաչառ ենթարկէ ծննդաբերութեան և միւս նրան կից հարցերն ու պայմանները: Այս տեսակէտից, պէտք է խոստովանել, որ նա, ընդհանուր առմամբ, ամենայն աջողութեամբ գործը տանում է մինչև վերջը:

Չը նայած, որ Զոլայի նոր վէպը մի շատ հասարակ ցանցի վրա է հիմնված, գոնէ այն, ինչ կազմում է «Բեղմնաւորութեան» զուտ վիպական մասը, ուր ոչ մի հոգեբանական շարժման չէք պատահի, սակայն վէպի ամբողջ 700 երեսները կարդալուց յետոյ՝ տեսնում էք, թէ ինչ զգածված և խոր մտածած տողեր էք կարդացել: Բացի այդ, դուք իսկոյն նկատում էք, որ ֆրանսիական բօմանիստը խօսում է այնպիսի նիւթի մասին, որ իր էութեամբ սոցիալական կեանքի ամենագործնական հարցերից մէկն է:

Թող այն ամենը, ինչ ասում է հեղինակը՝ այնքան էլ համոզիչ չը լինի, այնքան էլ ակնյայտնի չը լինի իր մերկութեամբ. բայց մի բան, որ չէք կարող չը նկատել՝ դա վէպի իդէական ոգին է, որ ակամայ ամեն մի լուրջ ընթերցողի գլխում մի շարք մտքեր է յարուցանում, ստիպելով ի մօտոյ ծանօթանալ շօշափած հարցերի հետ և մինչև-իսկ հեղինակի ասածները աւելի լուրջ քննութեան ենթարկել:

Բուն վէպը, ինքն ըստ ինքեան, առանց իր զարդարանքներին, այսինքն առանց հեղինակի իդէաների—ոչինչ հետաքրքրական բան չէ ներկայացնում: Ասենք սակայն վէպի բուն կորիզի մասին մի քանի խօսք:

«Բեղմնաւորութեան» մէջ Զոլան զուգընթացաբար մէջ է բերում երկու ընտանիքի՝ Ֆրոմանի և Բոշէնի ընտանիքների պատմութիւնը:

Հարուստ գործարանատէր Բոշէն ամուսինները շատ գոհ են, որ ունեն միայն մի երեխայ, այն էլ արու զաւակ: Ուրիշների քրտինքով ահագին հարստութիւն դիզելուց յետոյ՝ Բոշէնների միակ հոգսը և նպատակը դարձել է չունենալ այլ ևս մի երկրորդ երեխայ, որպէսզի իրանց հարստութիւնը իրանց մահից յետոյ չը բաժանվի մի քանի մասերի. այդ միտքը դարձել է նրանց միակ ցանկութիւնը, կեանքի նպատակը. և, ի հարկէ, այդ նպատակին հասնելու համար նրանք դիմում են ամեն տեսակ բժշկական միջոցների և ի վերջոյ հասնում են այդ իդէին:

Հակառակ սրան՝ Ֆրոման ամուսինները, որ մի աղքատ և գործարանական բանւոր ընտանիք են կազմում, բոլորովին այլ տեսակէտից են նայում ամուսնութեան վրա: Ֆրոման ամուսիններ-

Թիւրքիայի պէս յետ ընկած մի երկրում, Զմիւռնիայի Տէդէեան տպարանը։

Եւ մինթէ կարծում էք, որ տպարանը ազգասիրութիւն էր անում։ Նոյն իսկ «Հրատարակչական ընկերութիւնը» սխալ ուղղութիւն է բռնել՝ իր հրատարակութիւնները մասնաւոր տպարաններում տպագրել տալով։ Վախենում են, մի գուցէ տպարանը վնաս անէ։ Այո, վնաս կանէ ոչ-վաճառական և գրքին ոչ ծանօթ մարդկանց ձեռքում. բայց հօ մեր երկրում կան բազմաթիւ տպարաններ, որոնք առաջ են գնում, փող են աշխատում իրանց տէրերի համար։

Այդ հարցը, որ ես բարձրացնում եմ ներկայ յօդուածով՝ խստովանում եմ, բաւական լուրջ հարց է. հարկաւոր է «արտելի» կազմակերպութեան համար թոյլտուութիւն, կանոնադրութիւն, և այլն. բայց այդ բոլորի համար ոչ մի դժուարութիւն չը կայ աշխատել և ձեռք բերել։

Թէ «արտելի» և թէ տպարանի գործը երկուսն էլ նման չեն նաւթային գործերին, և բաժնետէրը չէ կարող, ի հարկէ, 100-ին 5,000 շահ սպասել տարեկան. բայց և նա չի ենթարկված լինի բախտի խաղերին և մի օր էլ իր երէկվան 1,500 ր. չի տեսնի միւս օրը 40 ր. դառած, ինչպէս այդ պատահել է մեր մի յայտնի չարաբախտ ընկերութեան ողորմելի ակցիաների հետ։

Աբէլ Ապրէսեանց

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳԻՈՒՄ

I

Հոկտեմբերի 23-ի ներկայացմանը կայացաւ այս տարի արտիստութեան ասպարէզը դիմողներից երկուսի, օրիորդ Խիթարեանի և պ. Խաբազեանի դեբիւտը, միանուագ և միևնոյն պիեսայում։ Դեբիւտանտները իրանց առաջին փորձի համար Բագուի հասարակութեան առաջ՝ ընտրել էին Կարէեվի «Զարագուշակ քայլը», թարգմանութիւն Աւալեանի։ Իրօք չարագուշակ քայլ...

Նա չարագուշակ է եղել ամենից առաջ իր, հեղինակի համար՝ իբրև դրամատուրգի, նրա ստեղծագործական ընդունակութիւնների աստիճանի տեսակէտից. իսկ յետոյ չարագուշակ է այն ամենի համար, որոնք իրանց ընդունակութիւնները դերասանական արուեստի մէջ արտայայտելու նպատակով ամբողջ դրամատիրական գրականութեան մէջ ուրիշ ընտրութիւն չեն կարողանում անել՝ բացի այս՝ իր տեսակի գոհարից։ Յաժենայն դէպս, ընտրողների ճաշակի տեսակէտից՝ այս պիէսը ոչ մի կերպ բարեգուշակ չէ կարելի անուանել, իսկ պ. Խաբազեանի վերաբերմամբ պիէսը միանգամայն արդարացրեց իր անունը։ Նրա խաղը յոյսեր չէր ներշնչում. բայց խաղի մասին յետոյ։

«Զարագուշակ քայլը» մի ինչ-որ թոյլ ակնարկ է իրական կեանքում կատարվող որոշ երևոյթների մասին, որոնց էութիւնը հեղինակը բոլորովին չէ ըմբռնել։ Կեանքի դրամատիզմը չէ եղել նրան հետաքրքրողը. նրա երևակայութիւնը կենսական աւերիչ գործօններ տպաւորութեան տակ չէ ստեղծվել. նա ուզեցել է դրամա գրել, կամ ինչպէս ասում են՝ թխել, ուրիշ ոչինչ։ Վայր ի վերոյ դիպուածքներ, էրօտիկական կանվայի վրա մէկը միւսի հետ կապելով, մէկը միւսից բռնազբօս առաջացնելով և այդ բոլորը տեսարանների և գործողութիւնների վերածելով՝ հեղինակը կարծել է, թէ դուրս եկաւ դրամա։ Երկու միմեանց սիրող սրտեր բոլոր պայմանները ունեն փոխադարձ երջանկացնելու միմեանց, բայց... բայց օրիորդի զլխումը դժբախտ միտք է ծագում. նա յանկարծ յայտարարում է, որ իր հաճութիւնը կը տայ մի տարի անցնելուց յետոյ. յետոյ դուրս է գալիս, կամ աւելի ճիշտն ասած՝ հեղինակը դուրս է բերում, որ օրիորդը հեռատես վարվեց, որովհետև ոչ թէ մի տարի, այլ մի քանի ժամ չանցած՝ երիտասարդը (փեսացուն) զրաւվում է մի կոմսուհիով, որի տան մէջ բնակարան ունի վարձած օրիորդի ընտանիքը, որը կազմում են ինքը, մայրը և մի ինչ-որ արբեցող, պաշտօնաթող հասակաւոր զինուորական։ Հետաքրքիրն այն է, որ երիտասարդը կոմսուհիով գրաւուելով հանդերձ՝ ըստ երևոյթին շարունակում է սիրել օրիորդին. գոնէ նրա մասին խօսք լինելիս միշտ յուզվում է. բայց թէ իրօք ինչ զգացմունք է տանջում նրան այդ դէպքերում՝ դրական կերպով որոշել դժուար է, որովհետև, ինչպէս երևում է՝ հեղինակը ինքը իրան լաւ չէ պարզել այդ—խղճի խայթոց է ուզում ցոյց տալ, թէ սէր։ Կոմսուհին բաւական չէ, որ հերոսուհուց խլում է նրա սիրեցեալին, որի իսկապէս զրպանով է հետաքրքրված. հալածում էլ է նրան,—ինչու, դժուար է հասկանալ. խանդոտութեան առիթ չը կայ։ Հետաքրքիրն այն է, որ այն հարուածը, որ պատրաստում է կոմսուհին օրիորդի դէմ, որ և անմիջապէս առաջ է բերում դրամայի լուծումը՝ այն է, որ նա առաջարկում է օրիորդի ընտանիքին թողնել իր բնակարանը։ Այս հարուածը դառնում է վերջին բաժակը, և օրիորդը վճռում է դիմել անառակ կեանքի—վերև յիշված հարբեցող զինուորականից մի բաժակ օղի խնդրելով և խմելով՝ անում է իր առաջին «չարագուշակ քայլը» դէպի շեմքը, բայց իսկոյն ուշաթափվում և ընկնում է։

Հիմնելով պիէսայի դրամատիզմը սիրոյ անհաստատութեան վրա, փոխանակ շեշտելու և հոգեբանական լուսաւորութեան ենթարկելու այդ անհաստատութիւնը պայմանաւորող պատճառները ի դէմս հերոսի, իբրև որոշ շրջանի բարքերի և բարոյական աշխարհայեացքի ներկայացուցչի,—հեղինակը մտցնում է կենսական նոր գործօն,—այն է տնտեսական, և վերջինիս, այսպէս ասած, յանձնարարում է դրամայի լուծումը։ Սէրը բաւականաչափ զօրեղ և հպարտ զգացում է, որ թոյլ տայ իրանով տանջվողին ապրել այն բնակարանում, որտեղ որսացել և խլել են նրա սիրեցեալին, նա մանաւանդ ստորանալ այն աստիճան, որ հակառակորդի առաջարկութիւնը—թողնել բնակարանը—պատճառ դառնայ անառակութեան դիմելու, այն էլ մի ինտելիգենտ և բարեսիրտ օրիորդին։ Խօսք չէ կարող լինել, որ տնտեսական պատճառները ինքն ըստ ինքեան կարող են սոսկալի դրամաներ առաջ բերել, խորտակել մարդու երջանկութիւնը ամեն կողմից։ Բայց հեղինակը կեանքի այդ գործօնի վրա չէ հիմնել իր երկի դրամատիզմը, թէև լուծում է նրանով, այն էլ այնպիսի անբնական ձևով, որ ոչ միայն խանգարում է իր ընտրած դրամատիական սկզբունքը, այլ և հոգեբանութեան տարրական կանոնները։ Ունենալով սխալ սխեմա՝ դրաման մանաւանդ կազում է վերջինիս իրագործման կողմից, որը այնքան մանկական և միամիտ է, որ տալիս է նրան աշակերտական գրուածքի կնիք։ Երևոյթները և անձնաւորութիւնները նկարագրած են մի-մի զբծով, որով կապվում են ինտրիգայի հետ, այն էլ մի կերպ, այնպէս որ աւելորդ է մտածել անգամ, թէ դրաման հասարակական կեանքի օրպիսի երևոյթների վերարտադրութիւն է։

Այժմ դառնանք խաղին։ Հանդիսականների առանձին ուշադրութեան առարկան այս պիեսայի խաղի մէջ բնականաբար կազմում էին դեբիւտանտները։ Բայց նրանք բացի այն անընդունելի պայմանից, որ միշտ ներկայացնում է առաջին փորձը՝ գտնվում էին այն անյարմարութեան մէջ, որ իրանց ոյժերը պիտի ցոյց տային պիեսայի շնորհիւ անմիտ և շինծու հոգեկան դրութիւնների մէջ. իսկ դա մի այնպիսի հանգամանք է, որ նսեմացնում է նոյն-իսկ արուեստօրէն տարած խաղի տպաւորութիւնը։ Այդպիսի դրութեան մէջ հանդիսացան մեր առաջ դեբիւտանտները։ Աչքի ընկնող գիծը օրիորդ Խիթարեանի խաղի մէջ (Վարվարա Պեչօրինա) կազմում էր խիստ դիտակցական վերաբերմունքը դէպի իր դերը. իւրաքանչիւր հոգեկան վայրկեան նա արտայայտում էր, կարելի է ասել, նախապէս մտածած և կշռած։ Նրա խաղի մէջ կեղծմունք չը կար, չնչին բացառութիւններով։ Բայց չը նայելով այս ամենին՝ խաղը զգալի տպաւորութիւն չէր թողնում, զօրեղ կերպով չէր ազդում, չէր յուզում այն տեսարաններում, որոնք յուզիչ պիտի լինէին։ Մենք տրամադիր ենք նկատած հանգամանքի գլխաւոր պատճառը վերագրել նիւթի անկատարելութեան, թէև այժմեանից էլ պարզվեց, որ օրիորդի ձայնը բաւականաչափ հարուստ և դիւրազգած չէ, հոգեկան էմօցիաները և յուզմունքները իրանց նրբութիւններովը զօրեղ և ազդու կերպով արտայայտելու համար. ձայնի մէջ չը կան դրա համար անհրաժեշտ տարրերը։ Նոյնը կարելի է ասել միմիկայի մասին. օրիորդի դէմքը և հայեացքը յուզիչ արտայայտութեան չէին կարողանում հասնել։ Դերասանական արուեստը մի տեսակ սինեմատօգրաֆական նկարչութիւն է. արտիստն էլ տալիս է նկարներ, միայն անընդհատ, իւրաքանչիւր վայրկեան, իր դէմքի և շարժուածքների միջոցով։ Այդ նկարների մէջ օրիորդ Խիթարեանի վրձինը, եթէ կարելի է փոխաբերաբար գործածել այս բառը՝ գեղարուեստական զգալի զօրութեան չէ հասնում։ Բայց շնորհիւ օրիորդի արդէն շեշտած դիտակցական վերաբերմունքին դէպի իր խաղը, ցենզին, համեմատաբար աչքի ընկնող պարտութեան՝ նրանից կը մշակվի հայկական բեմի համար օգտաւէտ գործիչ։ Ինչ վերաբերում է պ. Խաբազեանին, որ կատարում էր Բորոդինի դերը՝ ցաւելով պիտի նկատենք, որ այժմ ոչ մի նպաստաւոր բան չենք կարող ասել։ Պ. Խաբազեանը ամբողջովին ներկայացնում է մի հում նիւթ, որից նշաններ չեն նկատվում, թէ կարող է արտիստ դուրս գալ։ Նրա խաղը վերին աստիճանի տարրական էր։ Բարդ և բազմազան հոգեկան դրութիւնների համար նա մի երկու չաքլօն գիտէ, այն ևս վերին աստիճան անկատար, որոնք գործադրում է տեղի-անտեղի և չփոթում. սիրոյ փաղաքշանքը նա այնպէս էր կատարում, որ թւում էր թէ զայրոյթ է արտայայտում։ Սակաւ բացառական դեր չէ կատարում նրա խաղի մէջ նրա դէմքի բնական արտայայտութիւնը։ Ի մեծ մասի և խոժոռած՝ խաղի ժամանակ նա հաւաքեա չէ փոփոխվում։ Նկատելի է, որ նա չէ զգածվում և չէ յուզվում իր դերով, ուր մնաց, որ յուզէր ուրիշներին։ Եթէ մի մարդու անաջողութիւնը կոչումից դուրս ասպարէզում դժբախտութիւն է՝ պ. Խաբազեանը կարող է իրան դժբախտ համարել։ Մենք այն կարծիքին ենք, որ որքան շուտ պարզվի ճշմարտութիւնը՝ այնքան աւելի լաւ է նրա համար, որին վերաբերվում է. մի երիտասարդի համար աշխարհը չէ փակվում դերասանական ասպարէզով։ Ոչինչ չունենք, եթէ պ. Խաբազեանը մի շարք փորձեր կատարէ, և ուրախ կը լինենք առաջին դէպքին, որ կը փոխէ մեր այժմեան կարծիքը։ Միւս դերակատարներից միայն օրիորդ Վարդուհին այրի Պեչօրինայի դերում, Աղայեան Պիսարեվի դերում, Աւետեան Բուզասինի դերում գոհացուցիչ խաղացին, մանաւանդ Աւետեանը, որ բաւականաչափ կօմիզմով կատարեց իր դերը։

Ե. Սաղաթելեան

ՆԱՄԱԿ ՂԱԶԱԽԻ ԳԱՒԱՌԻՑ

Քարվանսարա, Նոյեմբերի 3-ին

Այս տարվայ երաշտը փչացրեց ցանքսերը և այդ պատճառով հացահատիկը զգալի կերպով վնասվեց ու միջակից էլ ցածր եղաւ։ Կան այնպիսի տներ, որոնք յետ չը ստացան նոյն-իսկ իրանց սերմը։ Այդպիսի տները, այն էլ մեր գիւղում, քաղցած չեն մնայ, որովհետև խնամուին այդպիսիների համար հացի շտեմարան է, և նրանք օրական ստացած վարձով կերակրվում են և «ապրում» են գնում մի կերպ, թէև «աղաս» փոդրաթիչները փողի տեղ «ճոթ-ժոթ» են տալիս։ Կարսի երկաթուղու բացմամբ մեր ճանապարհի երթևեկութիւնը զգալի կերպով պակասել է. հետզհետէ խանութների թիւն էլ կը պակասի, կը պակասի և գործը, հետևապէս էլ մեծ պահանջ չի լինի աշխատող ձեռքերի, ուրեմն էլ օրական վարձով ապրող ընտանիքների դրութիւնը անասելի կերպով կը վատթարանայ և կընկնի մեր երկրի՝ ոչ վաշխառուների, այլ սրբանց «ճուլտիկների» ձեռքը, և ահա պատրաստ է «վեր առայ և պարտ եմ 75 մանէթ վեց ամիս ժամանակով առանց տոկոսի» մուրհակը...

Մեր գաւառի գիւղերում, բացի Թիլիջանից և Քարվանսարայից, երկրագործ ժողովուրդ են. բայց այդ երկու գիւղերի հողը շատ սակաւ է և ճանապարհի վրա լինելով՝ ժողովուրդը պարապում է աւելի վաճառականութեամբ։ Ճանապարհի երթևեկութիւնը պակասելով՝ կը պակասի և առևտուրը, ուրեմն արհեստական միջոցներով դադարեցնել որդեծնութիւնը—մի դատապարտելի կռիւ է, որ մղվում է ընդդէմ բնութեան։

Սակայն Բոչէն ամուսինների միակ զաւակը մեռնում է, չարդարացնելով այդպիսով իր ագահ ծնողների յոյսը, որոնք նրա մահից յետոյ բոլորովին յուսահատ դրութեան մէջ են գտնվում, մանաւանդ որ այժմ, արդէն շնորհիւ ֆիզիոլոգիական պայմանների, Բոչէնները չեն էլ կարող ունենալ այլևս երեխայ, թէև նրանք այժմ այնքան ցանկութիւն ունեն ունենալ մի երեխայ իրանց հարստութիւնը ժառանգող։

Երեխայ ունենալու նպատակով Բոչէն ամուսինները, մանաւանդ կինը, դիմում են ինչ ասես միջոցների, բայց բոլորը ապարդիւն. դա աւելի ևս տաղտկացնում, յուսահատեցնում է նրանց վիճակը։ Եւ մինչդեռ Բոչէնները այն աստիճան զբաղված են այդ հարցով, որ իրանց գործարանական գործերին էլ չեն նայում, և մնակութեան շեմքի վրա են կանգնած, մինչդեռ այդ այդպէս է՝ ասում ենք, Ֆրօմանի ընտանիքը քանի գնում ծաղկում, բազմանում է։ Չը նայած, որ Ֆրօմանի օրավարձը այնքան էլ մեծ չէ, բայց և այնպէս նա չէ յուսահատվում, երբ տեսնում է, որ մի երեխայ էլ ունեցաւ. նրա տոկունութիւնը եռապատկվում և քառապատկվում է. նրա էներգիան նոյն չափով մեծանում է՝ ինչ չափով որ նրա ընտանիքի անդամների թիւը մեծանում է։

Ճիշտ է սակայն մի բան, որ գործարանում բանելով չէ կարելի այնքան մեծ ընտանիք կերակրել, և ահա երկար մտածելուց յետոյ Ֆրօմանն գալիս է այն եզրակացութեան, որ պէտք է վարձով առնել մի կտոր հող և հողագործութեամբ պարապվել։ Այդ նպատակով նա էժան գնով վարձում է Բոչէնից մի կտոր հող, որը բոլորովին անբերրի է։ Ֆրօմանն սկսում է պարարտացնել հողը զանազան քիմիական միջոցներով և իսկապէս որ շուտով բոլորովին անբերրի հողը դառնում է բեղմնաւոր և պարարտ, մինչ այն աստիճան, որ Ֆրօմանի՝ 12 անդամից բաղկացած ընտանիքը կարողանում է հեշտութեամբ կերակրվել։ Նոյն այդ ժամանակամիջոցում Բոչէնների առևտրական գործերը քանի գնում՝ վատանում են, և նրանք վերջնականապէս սնանկանում են։ Բոչէն ամուսինների արհամարհանքը և նախանձը Ֆրօմանի վերաբերմամբ չափազանց մեծ է. նրանք ամեն կերպ աշխատում են նրան վնասել, սակայն Ֆրօմանն և իր ընտանիքը քանի գնում՝ ծաղկում և հարստանում են։ Ֆրօման ամուսինները երջանիկ են իրանց զգում, որ ամենայն ճշտութեամբ կատարել են կեանքի և բնութեան ներկայացրած աշխատանքը։ Ա՛յս է ահա մի քանի խօսքով վէպի կորիզը, որին հեղինակը տուել է «Բեղմնաւորութիւն» անունը։

Հռչակաւոր բօմանիստի վէպերը միշտ ներկայացրել են ֆրանսիական բուրժուազիայի բարքերը. սակայն այս վերջին վէպը ամենից շատ հակաբուրժուական վէպն է. որքան դառը փաստեր ու մտքեր բուրժուազիայի հասցէին ուղղված. որքան հեգնութիւն և ծաղր ան կարող բուրժուազիայի վերաբերմամբ, որը կորցրել է արդէն իր մտաւոր և բարոյական բեղմնաւորութիւնը։

Վեր առէք վէպի այն գլուխները, որտեղ հեղինակը մեայլ գոյներով մէկը միւսի վրա կուտակում է բուրժուազիայի արարքները, այն արարքները, որոնց տակ հէնց ինքը բուրժուազիան քայքայվում, տապալվում և փլչում է։ Ի՞նչ միջոցների միայն չէ դիմում ագահ բուրժուազիան՝ իր հարստութիւնները պահպանելու նպատակով։ Եւ ահա դրան կից հեղինակը մեզ տալիս է մի այլ դասակարգի պատկեր. ահա մի բեղմնաւոր և արդիւնագործող հասարակութիւն, նոյնքան ներգործական ու աշխատող՝ որքան ընկերասէր, առաքինի և առաջադէմ. հասարակութիւն, որ կազմում է աշխատանքի դասակարգը։

Ճիշտ է, հեղինակի դրական տիպերը տեղ-տեղ չափազանցացրած են. ճիշտ է, տեղ-տեղ նա իրերի դրութիւնը անաչառ նկարագրողի փոխարէն՝ դառնում է ամենազգածված քնարերգակ-բանաստեղծ, բայց և այնպէս այս վէպը Պարիզի իրականութեան պատկերն է։

Ազգաբնակչական և ծննդաբերութեան հարցերը վերջին ժամանակներս շատ զբաղեցրին ֆրանսիական հասարակութիւնը. այդ տեսակէտից էլ «Բեղմնաւորութիւնը» կարծես այդ հարցերի անդրադարձումը լինի։ Եւ եթէ հեղինակը իր վէպում Մալթուսի ազգաբնակչական և միւս մի քանի թէօրիաների մասին է խօսում՝ չը պէտք է կարծել, որ դա մի նեղ մտքով առած տենդենցիոզ վէպ է. ամեն մի գրական գրուածքի անհրաժեշտ տենդենցիան այստեղ էլ կայ, որ և շատ բնական է, բայց կայ և իդէալ, բառիս լայն մտքով։

Մի բան, որ շատ է աչքի ընկնում «Բեղմնաւորութեան» մէջ՝ դա այն է, որ նատուրալիստ հեղինակը դարձել է մասամբ բօմանտիկ, դարձել է բանաստեղծ, որը գիտէ յափշտակվել, ոգևորվել, ամբողջ լիրիքական երեսներ գրել։ Մանաւանդ երբ խօսում է բնութեան բեղմնաւորութեան մասին—իր յափշտակման չափն էլ կորցնում է կարծես. բայց ով գիտէ. գուցէ այդ չափազանցութիւնը, երևակայութեան այդ հարստութիւնը անհրաժեշտ է, քանի որ նա իր վէպն էլ անուանում է «Աւետարան» *)։

Վերջերս Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը հրատարակեց մի քանի մեծ վէպեր։ Լաւ կը լինէր, եթէ ձեռնարկէր թարգմանել և Զոլայի մի քանի վէպերը, մանաւանդ «Պարիզը» և «Բեղմնաւորութիւնը»։ Գաւառացի հայ ընթերցողին մտաւոր և բարոյական հորիզոնը դրանք մի քիչ կը լայնացնէին...

Ռ. Բ.

Պաբէզ.

*) Ներկայումս Զոլան գրում է «Աւետարանի Զ-րդ մասը», որ պէտք է կոչվի «Աշխատանք» և «պէտք է փառաբանէ մարդկային աշխատանքը,—մարդկային միակ նպատակը, որ միայն կարող է երջանիկ անել մարդուն» ինչպէս նա յայտարարեց անցեալ օր իր մօտ եկող բանուորներին։ Մենք չը գիտենք, արդեօք աշխատանքը փառաբանելով հանդերձ Զոլան աչքի առաջ կունենա՞յ աշխատանքի տաժանելի պայմանները, որոնց ենթարկված է մարդկային սուուրբ մեծամասնութիւնը, առանց սակայն երբևէ ցնորքներ երջանիկ զգալու. յամենայն դէպս պէտք է որ «Աշխատանքը» շատ հետաքրքրական վէպ լինի։

բի հասկացողութեամբ երեխաները սիրոյ պակաս են և ընտանիքի երջանկութիւնն են կազմում, ուրեմն արհեստական միջոցներով դադարեցնել որդեծնութիւնը—մի դատապարտելի կռիւ է, որ մղվում է ընդդէմ բնութեան։

Սակայն Բոչէն ամուսինների միակ զաւակը մեռնում է, չարդարացնելով այդպիսով իր ագահ ծնողների յոյսը, որոնք նրա մահից յետոյ բոլորովին յուսահատ դրութեան մէջ են գտնվում, մանաւանդ որ այժմ, արդէն շնորհիւ ֆիզիոլոգիական պայմանների, Բոչէնները չեն էլ կարող ունենալ այլևս երեխայ, թէև նրանք այժմ այնքան ցանկութիւն ունեն ունենալ մի երեխայ իրանց հարստութիւնը ժառանգող։

Երեխայ ունենալու նպատակով Բոչէն ամուսինները, մանաւանդ կինը, դիմում են ինչ ասես միջոցների, բայց բոլորը ապարդիւն. դա աւելի ևս տաղտկացնում, յուսահատեցնում է նրանց վիճակը։ Եւ մինչդեռ Բոչէնները այն աստիճան զբաղված են այդ հարցով, որ իրանց գործարանական գործերին էլ չեն նայում, և մնակութեան շեմքի վրա են կանգնած, մինչդեռ այդ այդպէս է՝ ասում ենք, Ֆրօմանի ընտանիքը քանի գնում ծաղկում, բազմանում է։ Չը նայած, որ Ֆրօմանի օրավարձը այնքան էլ մեծ չէ, բայց և այնպէս նա չէ յուսահատվում, երբ տեսնում է, որ մի երեխայ էլ ունեցաւ. նրա տոկունութիւնը եռապատկվում և քառապատկվում է. նրա էներգիան նոյն չափով մեծանում է՝ ինչ չափով որ նրա ընտանիքի անդամների թիւը մեծանում է։

Ճիշտ է սակայն մի բան, որ գործարանում

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ֆրանսերեն գրեց Ռ. Ֆրանսիսի Լեմանը

Հ. Գասպարյան

Ամերիկայի հայկական կյանքի մասին գրքերի մեջ, որոնք հրատարակվել են 1890-ականներից սկսած, ամենաարժեքավորներից մեկն է Ռ. Ֆրանսիսի Լեմանի «Les Arméniens en Amérique» գիրքը, որ լույս է տեսել 1898 թվականին։ Հեղինակը ֆրանսերեն գրել է գրքի մի մասը, մի մասը՝ գերմաներեն։ Գրքի մեջ հանդիպող տվյալներից մի քանիսը հնացած են, մի քանիսը՝ ոչ ճշգրիտ, բայց ամբողջությունը դեռ հետաքրքրություն է ներկայացնում։ Գրքի հեղինակը ինքն է եղել Ամերիկայի հայերի մեծ մասի հետ։ Նրա գրքի մեջ հանդիպող տվյալներից

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հինգշաբթի, Նոյեմբերի 18-ին
ԿՕՆՑԷՐՏ
յայտնի ջութակահար
ԳՐԻԳՕՐՕՎԻՉԻ
մասնակցութեամբ դաշնակահար
Է. ՓԱՅԷՐԻ
Սկիզբն է երէկոյեան 9 ժամին
Տոմսակները և պրոգրամն կարելի է ստանալ Բ. Մ. Միրիմանեանի դէպօում, Դիլորցօվայա փողոց: 2—2

ԱԳՈՒԼԻՍՈՒՄ մի հայ ընտանիքի համար հարկաւոր է գիմնազիական կրթութիւն ունեցող
ՎԱՐԺՈՒՀԻ,
որ գիտենայ և հայերէն: Վարժուհին պէտք է պարապի երեք երեխայի հետ, 500 բուբլի ռոճիկով, և ապրի նոյն ընտանիքում:
Գայմանների մասին մանրամասն տեղեկանալ Ե. Ցարութիւնեանի մասնաւոր դպրոցում, Бебутовская, № 38. (Ե. Հ. Չ.) 4—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ: Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.:

ՏՐԻՖԼԻՍԻՆ
ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը: Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անվիճակէս՝ պօստով: 21—100

Լոյս տեսան
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1900 թ.
ԾՈՑԻ և ՊԱՏԻ (Շիրակ)
Օրացոյցները:
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑԸ զարդարված է մի քանի հայ գործիչների պատկերներով. ունի նոր յաւելուած, ընդարձակ բժշկարան, հարուստ երաշխան և նոր զուարճալի վիճակարան:
—
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՑԻ մէջ կան բարոյական խրատներ, նոր ծիծաղաշարժ առակներ՝ Մօլլա-Նասր-Էդդինից, Դալի-Քէշիշից, Գըլըպուղուց, այլև ժողովրդական առածներ, գիւղական լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, ժողովրդական երգեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բժշկական, անտեսական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ:
Գները { Ծոցինը—20 կոպէկ / Պատինը—50 կոպէկ
Գումարով գնողներին լինում է զիջում:
Դիմել՝ Александрополь, Карапету Апинянъ կամ Alexandrople, Karapet Apinian (Caucase). 5—20

Լոյս տեսաւ
ՕՐԻՈՐԴԻ ԱԼԲՈՄԸ
ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԵԿ

10 օրինակ գնողին	. . . . .	20%
50 » »	. . . . .	30 »
100 » »	. . . . .	45 »

Դիմել՝ Тифлисъ, Вознесенская ул., № 23/а. Аирапету Бабурянцъ. 2—3

ԲԱԳՈՒ—ՍԵՒ ՔԱՂԱՔ
Մարզարեանի գործարանում բացված է ԿԵՐՈՍԻՆԻ, ԳԱԶՕԼԻՆԻ, ՍՕԼԵԱՐԻ ԻՒՂԻ և այլ ՆԱՒԹԱՑԻՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ
ՊԱՀԵՍՏ
Ցանկացողներին կարելի է տալ և վագոններով: Դիմել՝ Черный городокъ, Михаилу Канджунцову, заводъ Маркарова. (Ե. Հ. Չ.) 12—15

Լոյս տեսաւ
ԷՄՄԱՆՈՒԷԼ ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
„Ընտիր Հատուածներ“
Ա. մասը—Արձակ
Չորրորդ տպագրութիւն:
Գինը՝ 1 ր., գումարով՝ 80 կոպ.
Ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում: (Հ.) 5—5

Շուշում շուտով լոյս կը տեսնի
ԳԱՐԵԳԻՆ ԶԱՌԱՓԵԱՆՑԻ
«ՈՍԿԵՀԷՐ ՏՂԱՆ ՈՒ ԻՄԱՍՏՈՒՆ ԱՂՋԻԿԸ»
խորագրով գրքոյկը: 2—10

Ցայտնում եմ ի գիտութիւն յարգելի հասարակութեան, որ Թիֆլիսի Զուղուրէթ քաղաքամասում, Նիկոլաեվսկայա փողոցի վրա գտնվող Իզմաիլովի բաղանիքի փոխարէն՝ ես չինել եմ նոր
„РУССКАЯ ПАРНАЯ БАНЯ“
բաղանիքը, որ կը սկսի կանոնաւոր բանել հինգշաբթի օր, ամսիս 18-ից: Այդ բաղանիքը բաղկացած է տասն երկու հատարներից, ամեն մէկը 1—2 բաժանմունքով, շոգիով և առանց շոգիի, և տասը հատարներ վաննաներով և դուշերով: Բացի դրանից կան նաև ընդհանուր՝ շոգիով բաղանիք տղամարդկանց, կանանց և զինուորների համար: Բոլոր հատարները շինված են մօզաիկով, ֆաեանսով և մարմարիոնով, գեղեցիկ նկարներով և կահաւորված են ճաշակով: Դուշերը պատրաստված են Շմիդի և ուրիշ սիստեմներով: Հատարները տաքացնվում են առանձին յարմարութիւններով և լուսաւորվում են ելեքտրականութեամբ: Բաղանիքի ջուրը մաքուր է և ամենաթանկ յատկութեան: Բաղանիքում կայ առանձին ֆոյէ—դահլիճ, չքեղ կահաւորված, որտեղ ստացվում են բոլոր լրագիրները. կան նաև ֆոնոգրաֆ և տելեֆոն: Բաղանիքում սարքած է բուֆէտ, որտեղից կարելի է ստանալ թէյ, սուրճ, կաթ, զովացուցիչ խմիչքներ և այլն: Ծառաներ—երկու սեռի՝ ռուս և տեղացի:
Ցանկացողներին տրվում են մաքուր սպիտակեղէններ և զանազան կօսմետիքական առարկաներ: Բաղանիքի բացում շինված է սկզբեր շատրվանով, որ լուսաւորվում է գիշերները ելեքտրականութեամբ:

ԳՆԵՐԸ

Շոգիով և սովորական հատարները	60 կ. մինչև 2 ր.:
Վաննաներ տաք ու սառը դուշերով	30 կ.
Տաք ու սառը դուշեր	20 կ.
Ընդհանուր շոգիով { Տղամարդկերանց . 20 կ. / Կանանց . . . . . 20 »	Տղամարդկերանց ընդհանուր շոգիով { Հասարակ դասակարգի համար . . . . . 10 կ. / Զինուորների համար . 5 »

2—5 Բաղանիքի սեփականատէր՝ Գ. Օ. Աբօէվ



ՆԱԽ ՔԱՆ ՄԵԿՆԵԼԸ
ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ ԵՐԵՔ ՔԷՆՕՄԵՆՆԵՐԻ
ՍՈՅՆ ՕՐՎԱՆԻՑ
ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ
Ի-Ը 20 Կ. ԻԻ-Ը ՄԻԱՅՆ 10 Կ.
Գօլովինսկի պր., տուն Արաֆելովի, Կադետսկ. Կորպ. դիմաց 4—5

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձասարի վանքի քարահանքից ամենաընտիր տեսակի «ԴԱՐԱԲԱՂԻ»
ՔԱՐԱՂԱՅԱՔԱՐԵՐ
մատչելի գներով և զանազան մեծութեան:
Մեր հասցէն. Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.
Որովհետև վերջերս երևացել են նաև ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ շատ ցածր են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ:
6—40 Քարահանքի կապալառու՝ Աբրահամ Հասան-Զալալեանց

Վաճառվում է, Մոսկվայում տպված,
„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
ազգային լիակատար ԵՐԳԱՐԱՆԻ առաջին հատորը, չորրորդ տպագրութեամբ, բաղկացած 402 մե, ծաղիր երեսներից, 300-ից աւելի գործածական երգերով, բանաստեղծութիւններով և երգերին վերաբերեալ արձակ գրուածքներով: Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ր., ճանապարհածախսով—1 ր. 20 կ.: 10 օրինակ գիրք պահանջողը ճանապարհածախս չէ վճարում: Ցանկացողները, յայտնելով իրանց ճիշդ հասցէն՝ դիմում են Բագու, «Սոխակի» հրատարակիչ Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանցին, սոյն հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ въ Баку. (Ռ. Չ. Ե.) 7—10

М. 109486

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Թիֆլիսում, վաճառվում են հետևեալ նոր գրքերը. Կ.

Տաղաւարեան բժ.	Մանդական գործարանի կազմախօսութիւն, բնախօսութիւն և առողջապահութիւն, ի պէտս չափահասից. Կ. Պոլ. 1899 թ. . . .	60
»	Մագումն հայ տառից	—
»	Մանրէաբանութիւն	—
»	Առողջապահութիւն	—
Մոճուեանց,	Տիզբնի կալանաւորը (հոգեբանական էտիւդ), Ա. 1899 թ. . . .	15
Նալեանց Ա.	Օսին ու Մօսին, վէպիկ. Ա. 1899 թ.	25
Շահնազարեանց Ս.	բժ. Երևանի հայոց թեմական դպրոցը և հասարակութիւնը, Մ. 1899 թ.	30
»	Ճառ դպրանոցին ներկայանալիս, Մ. 1899 թ. . . .	25
»	Դպրանոցիս աշակերտներին (մի քանի խրատներ), Մ. 1899 թ.	20

(Հ.) 1—3

Թիֆլիսի Այգեգործական դպրոցը
յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թ-ի աշնան և 1900 թ-ի գարնան ծախվում է նոյն այգեգործական դպրոցում, պակասեցրած գներով մօտ 4000 մէկ և երկու տարեկան ամենաընտիր տեսակների մրգեղէն ծառեր և 50,000-ից աւելի զարդածառեր, փշածառեր, վշտադալար և տերևազարդ ծառեր և թուփեր մէկ տարեկան հասակից մինչև հինգ:
(Ե. Հ. Չ.) 15—40

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 24 Նոյեմբերի (6 դեկտեմբերի) ԺՕՐԺԻ չոգենաւը, նաւապետ ԲՈՒԼ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետո:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մուրադեաններին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՈՎՈՐՈՍՍԻՑՍԿ—պ. Մելիսոր Հերշենզոնին: (Ե. Հ. Չ.) 8—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Ցեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, բաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղագրութիւն և ամենաւատ ձեռքերի ուղղելը:
Պարապմունքները սկսվելու են 1900 թ-ի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: 15—20

Дозволено цензурою Тифлисъ, 17 Ноября 1899 г. Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.